

Որակի հոշակագիր Միջազգային և ներքին զբոսաշրջություն

0 Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Միջազգային և ներքին զբոսաշրջություն
0.2	Ոլորտը	Զբոսաշրջություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին Բաժնի պետ Քրիստինե Պողոսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 583 995 Էլ. փոստ՝ foreign_trade@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն միջազգային և ներքին զբոսաշրջության հիմնական ցուցանիշների, ՀՀ վճարային հաշվեկշռի կազմման աշխատանքներում օգտագործելու նպատակով զբոսաշրջային ծառայությունների, ինչպես նաև ընդհանրապես զբոսաշրջության (միջազգային և ներքին) ծավալների վերաբերյալ:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Միջազգային և ներքին զբոսաշրջության ցուցանիշները կիրառվում են զբոսաշրջության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, զբոսաշրջության վերլուծության, բիզնես միջավայրի վերլուծության, սոցիալական զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշի կազմման հիմնական աղբյուրներն են՝ վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից եռամսյակային պարբերականությամբ հավաքվող տեղեկությունները, մինչև 2011թ-ը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն

		գործակալության, իսկ 2011թ-ից՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի, 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոսը Արմատատ, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ԶԶՀ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության», իսկ 2013թ-ից ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ 2013թ. իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Ցանկացած երկրի համար զբոսաշրջությունը դասկարգվում է 3 խմբի. <u>Ներզնա զբոսաշրջություն.</u> Ընդգրկում է այն զբոսաշրջիկներին, որոնք ժամանում են մեկ այլ երկրից: <u>Արտազնա զբոսաշրջություն:</u> Ընդգրկում է այն զբոսաշրջիկներին, որոնք մեկնում են իրենց երկրից (մշտական բնակության վայրի երկրից) մեկ այլ երկիր: <u>Ներքին զբոսաշրջություն.</u> Ներառում է այն զբոսաշրջիկներին, որոնք ճանապարհորդում են իրենց

		<p>իսկ երկրի (մշտական բնակության վայրի) սահմաններում:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><u>Չբոսաշրջիկը</u> ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության մեթոդաբանության (ՁՀԿ) համարվում է ցանկացած անձ, ով հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր մշտական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:</p> <p><u>Մշտական բնակության վայրը</u> դա այն աշխարհագրական տարածքն է, որտեղ անձը բնակվում է մշտապես:</p> <p><u>ՀՀ ռեզիդենտ</u>. Ըստ ԱՄՆ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, ՀՀ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, իրավաբանական անձը կամ ՀՀ տարածքում գործող որևէ տնտեսավարող սուբյեկտ, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը (ֆիզիկական անձանց համար՝ կենսական շահերի կենտրոնը) հանդիսանում է ՀՀ-ն: Ներգնա և արտագնա զբոսաշրջության վիճակագրության տեսակետով, եթե անձն անընդմեջ՝ 1 տարուց ավել ապրել և աշխատել է մեկ այլ երկրում, որն իր մշտական բնակության վայրի երկիրը չէ, դառնում է տվյալ երկրի ռեզիդենտ և նրա հետագա այցելությունը մշտական բնակության վայրի երկիր առնչվում է միջազգային զբոսաշրջությանը:</p> <p><u>Այցելու է</u> համարվում ֆիզիկական անձը, ով ճանապարհորդում է իր մշտական բնակության վայրից</p>

	<p>(երկրից) այլ վայր (երկիր) մինչև մեկ տարի ժամկետով, ցանկացած նպատակով (ճանաչողական, ժամանցի, գործնական, հանգստի, հարազատներին այցելության, կրոնական, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու կամ անձնական այլ նպատակներով), բացառությամբ ժամանման վայրում վճարովի գործունեություն իրականացնելը և ժամանման վայրում գտնվող կազմակերպություններից կամ ժամանման վայրի ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից վարձատրվելը: Այցելուները դասակարգվում են հետևյալ կերպ.</p> <ol style="list-style-type: none"> 1) Ջրոսաշրջիկներ (գիշերող այցելուներ). Այցելուներ, որոնք առնվազն մեկ գիշեր անց են կացնում ժամանած երկրում 2) Մեկօրյա այցելուներ: Այցելուներ, որոնք ժամանման երկրում չեն գիշերում: <p>Ներգնա և արտագնա զբոսաշրջության վիճակագրության բնորոշման հիմնական առանցքային չափանիշը համարվում է մշտական բնակության վայրի երկիր հասկացությունը: Այդ իսկ պատճառով ներգնա զբոսաշրջության դասակարգումն ըստ երկրների իրականացման համար որպես այցելուի ծագման երկրի հիմնական չափանիշ օգտագործվում է բնակության վայրը, այլ ոչ թե քաղաքացիությունը:</p> <p>Համաձայն զբոսաշրջության վիճակագրության մեթոդաբանության ներգնա զբոսաշրջության մեջ հաշվառման ենթակա չեն հետևյալ այցելուները.</p> <ol style="list-style-type: none"> 1) որևէ երկրից մեկնող, կամ որևէ երկիր ժամանող միգրանտները, ներառյալ նրանց խնամակալության տակ գտնվողները, 2) այն անձիք, որոնք հայտնի են որպես սահմանային աշխատողներ (ապրում են մի երկրի պետական սահմանին մոտ, իսկ աշխատում են սահմանային մյուս երկրում),
--	--

		<p>3) դեսպանատների և հյուպատոսությունների աշխատողները, զինվորականները, որոնք ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում իրենց երկրից տեղափոխվում են մեկ այլ երկիր կամ հակառակը,</p> <p>4) այն անձիք, որոնք ճանապարհորդում (տեղաշարժվում) են փախստականի կարգավիճակով,</p> <p>5) տարանցիկ ուղևորները, որոնք ֆորմալ առումով անձնագրային հսկողության կետերով չեն ժամանում տվյալ երկիր,</p> <p>6) ուսանողներ, որոնց ուսուցման ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է:</p> <p>Հետևյալ խմբի այցելուները չեն ներառվելու ներքին զբոսաշրջության խմբերում.</p> <p>1) այն բնակիչները, որոնք մեկնում են ՀՀ այլ տարածք այնտեղ բնակության հաստատման համար,</p> <p>2) այն անձիք, որոնք մեկնել են այլ տարածք աշխատանքային գործունեություն իրականացնելու համար և ծախսերը վճարվել են տվյալ աշխատանքից ստացված վարձատրությունից,</p> <p>3) այն անձիք, որոնք կանոնավոր կամ հաճախակի ճանապարհորդում են այլ վայր աշխատելու կամ սովորելու նպատակով,</p> <p>4) մշտական բնակության վայր չունեցող անձիք,</p> <p>5) զինվորականները զինավարժությունների ընթացքում:</p>
2 Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Եռամսյակային
2.2	Հրապարակման ամսաթիվը	Միջազգային և ներքին զբոսաշրջության վերաբերյալ տվյալները հրապարակվում են հաշվետու

		Ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Եռամսյակային
3 Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Հետազոտությունը գլխավորապես հիմնված է իրավաբանական անձանց համատարած դիտարկումների վրա: Հետազոտության մեջ տնտեսվարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p> <p>Պատասխանների մակարդակը մոտ 98% է:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	<p>Տվյալների հավաքումն իրականացվում է բիզնես ռեգիստրի արդիականացված բազայից վերցված համապատասխան գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց ցանկի հիման վրա, ընդ որում տեղեկատվությունը հավաքվում է համատարած:</p> <p>Սահմանված ժամկետից ուշ ներկայացված տվյալները ներառվում են հաջորդ հրապարակման մեջ ներկայացվող աճողական տվյալներում:</p>
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից ներկայացված տվյալների ճշգրտությունը իրականացվում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
4 Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՀՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄԱԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված

		Եվրոպական համայնքների վիճակագրական կոմիտեի կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է S9SՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա չէ
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալներն որակվում են վերջնական: Տնտեսավարող սուբյեկտների կողմից հաշվետվությունները ուշացումով ներկայացնելու դեպքում դրանք ներառվում են հաջորդ եռամսյակի աճողական տվյալներում:
5 Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ <u>Եռամսյակային հրապարակումներ</u> «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն): <u>Տվյալների բազա</u> http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6 <u>Ինտերնետային հասցե</u> Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար. ա/ իրավաբանական անձի ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, է/ տվյալներ հյուրանոցային տնտեսության միավորը շահագործող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ ը/ հյուրանոցային տնտեսության միավորի անունը (տեսակը)</p>

		թ/հյուրանոցային տնտեսության տնօրենի անունը, ազգանունը:
5.3	Փաստաթղթավորումը	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/file/model/am/20.1.pdf :
5.4	Այլ տեղեկատվություն	Միջազգային և ներքին զբոսաշրջության ցուցանիշների վերաբերյալ հաշվարկման առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. նոյեմբերի 30-ի «Ներգնա և ներքին զբոսաշրջության մասին» Ձև թիվ 1-Զբոսաշրջություն (եռամսյակային) և «Ներգնա, ներքին և արտագնա զբոսաշրջության մասին» Ձև թիվ 2-Զբոսաշրջություն (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևերը և լրացման հրահանգները հաստատելու մասին թիվ 78-Ն որոշմամբ:
6 Լրացուցիչ փաստաթղթավորում		
		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չեն: